

# ԶՈՒԹԱԿ

(ԷՏԻՒԴԻ)

ԳԵՐՐԴ ԶՈՒԲԱՐԻ

Ն... քաղաքի դատարանի փոքրիկ կիսամուլթ դահլիճը պարպեւմ էր. քրէական գործերի սիրահար ամբոխը ցրւելու վերայ էր. ինքը դատաւորը հանել էր արդէն իւր շղթան և մօտենում էր մեզ, փաստաբաններիս, երբ գրադիրը դարձաւ նրան:

—Պր. դատաւոր, ահա երկրորդ անգամն է, որ մի մարդ ձեզ է հարցնում... կամենում է առանել ձեզ:

—Խնդիրք մւնի, արտասահեց դատաւորը անվրդով, յոդնած ձայնով.

—Ասում է թէ այսու

—Թող դայ:

Գրադիրը մեկնեց. մենք, փաստաբաններս և ինքը դատաւորը, մասցինք ծխով լցւած սենեակում և շարունակում էինք մեր գործնական խօսակցութիւնը, երբ յանկարծ ծխի գուլանների միջից լսեց մի դողդոջուն ձայն.

—Ներեցէք, իմ պարոններ...

և գուան շէմքում երեւաց մի երկարահասակ, չոր ու ցամաք կազմածքով, ալեզարդ երկար, թափիթափւած մազերով, մի մարդ, որի կողքին կանցնած էր տասը տարեկան սև, վազվզող աչքերով մի աղջիկ:

—Ներեցէք, պարոններ, կրկնեց ծերունին:

Նա խօսում էր մաքուր իտալերէն լեզով:

Մօտ եկէք, դարձաւ նրան դատաւորը:

Սերունին :ը շարժւեց անգամ. նա ձգել էր իւր հայեացքը պատերին և անշարժ նալում էր մի կէտի:

—Մօտ եկէք... երևի խնդիրք ունէք... աս... նա այլ ազդէ է և ռուսերէն չէ հասկանում, դարձաւ ինձ դատաւորը, խնդրեմ թարգման եղէք:

Սենեակում տիրել էր լուսթիւնը. ներկայ եղողները հետաքրքրւած էին. ես մօտեցայ ծերունուն. նա արձանացած կանգնած էր դռան շէմքում և տրորում էր իւր սև, լայն, հնացած գլխարկը. նրա հագուստը աղքատ և ցնցուի էր. նրա թուլի, սևացած երեսը ծածկւած էր փոքրիկ, նեղ, միմեանց հետ խառնւած կնճիռներով. նրա հայեացքը, նրա անշարժ, մի կէտի մեխւած հայեացքը, նման էր առակու:

—Դուք խոալացի էք, պարոն, հարցրեցի ես:

—Այս... պարոն... խոալացի եմ... նոր եկայ այս քաղաքը... իսկ սա... իմ թռուս... իմ հանգուցեալ Բելիզէիս աղջիկը:

Սերունու ձայնը դողաց, երեսի կնճիռները լայնացան, իսկ աչքերը մնացին անշարժ, բոլորովին անշարժ:

Փոքրիկ խոալուհին նայեց վերաս իւր սև գլորակ աչքերով և վախեցած քաշւեց պապին:

—Երևի խնդիրք ունէք:

—Այս... պարոն... մի խնդիրք:

—Մօտ եկէք... ահա դատաւորը...

—Չեմ կարող... ես կոյր եմ...

Այդ ես կոյր եմ... ծերունին արտասանեց մի այնպիսի տխուր, սիրտ մաշող ձայնով, որ բոլոր ներկայ եղողները լարեցին իրանց ուշադրութիւնը, թէև ոչ մէկը նրանցից չէր հասկանում խտալերէն:

Սենեակում տիրեց խորին լուսթիւն:

—Այս... ես կոյր եմ... Մառիեթթա... տար ինձ դատաւորի մօտ Պապ ու թռուը մօտեցան սեղանին:

—Ահա 30 տարի է, որ ես չեմ տեսել հայրենիքիս երկնքի դոյնը, նրա մեղմ փերեղեայ կապուտակը, նրա ոսկի արելը, նրա լուսնեակը, նրա վառվող աստղերը... ես կուրացայ և Աստուծոյ գեղեցիկ աշխարհը դարձաւ ինձ համար մի մօւթ բանդ, մի խաւար գերեզման և ես... երկար 30 տարիներ ապրում եմ այդ սար-

սափելի խաւարում... Սկզբից այդ պատիժը անտանելի էր ինձ համար... զրկանքը խոցոտում էր սիրոս... քանիցս ինքնասպանութեան միտքը պաշարում էր իսձ... և վճռում էի մեռնել, բայց խիղճս բողոքում էր և ես... շարունակում էի ապրել, ապրել առանց լուսնի, զրկած արեից, կարծես ամբողջ կեանքս լիներ մի երկար, անվերջ գիշեր...

**Արտասուքի շիթը փայլեց ծերունու անշարժ, ապակեաչ աչքերում:**

—Իմ կինը մեռած էր վաղուց... մեռաւ մի օր և մին ու ճար աղջիկս և մնացինք ես և Մարիեթթաս... մնացինք անտէր ու որբ. մենք աղքատ էինք, չոր հացի կարօտ, թէև առաջ... շատ առաջ ես էլ եմ տեսել երջանիկ, բաղդասոր օրերս, բայց նոքա անցան, գնացին անդարձ... կուրացայ ես, կուրացաւ և բաղդա... մեր խրճիթը ծախեց պարոնը, որին պատք էի ես մի քանի ոսկի... մնացինք բաց երկնքի տակ... Մառիեթթաս լալիս էր... նա քաղցած էր... երեխաս կարող էր սովամահ լինել... հարկաւոր էր, ուրեմն, ապրուստի միջոցներ դոնել... Երիտասարդութեանս ժամանակ ես ջութակ էի ածում... ջութակս շատ հազարիւտ ջութակ էր, լաւ հուշակած վարպետի շինած... խրճիթս ծախող պարոնը խղճաց և թոյլ տւեց ինձ վերցնել ինձ հետ ջութակս... և ես... այդ օրից դարձայ թափառական երաժիշտ...

**Ծերունին կանգ առաւ, սրբեց իւր բարակ, ճղու ձեռով երեսի քրտինքը և կրկին շարունակեց.**

— Խտալիացից ոտով եկայ Խուսաստան... Մառիեթթաս էլ զրկիս... շատ քաղաքներ, զիւղեր անդանք միասին... ես ածում էի իսկ թոռս երգում... այդպիսով փող էինք աշխատում. պատահում էր օրերով հացի երես էինք տեսնում... բայց այնու ամենայնիւ ապրում էինք... և ահա անցեալ օր, երբ ես ածում էի հրապարակում, ինձ հրաւիրեցին մի տուն... այնուեղ մի քանի հոգի կեր ու խում էին սարգել... զինին արդին արբացրել էր նրանց. ես ածեցի նրանց համար ամբողջ գիշեր... Մառիեթթաս նոսիս երգում էր և աղա քնեց ծնկներիս վերայ... ես ածում էի, երբ մէկը մօտեցաւ ինձ և կոպիտ կերսրով խլեց ջութակս... ես շւարած վեր կացայ և կամենում էի մօտենայ այդ անպիտանին և յետ առնել

շութակս, բացց ես կոյլը եմ... ես դիպում էի աթոռներին, սեղանին, պատերին, իսկ արբածները հոհուում էին...

— Զութակս... շութակս տւէք ինձ, աղերսում էի ես, արտասուքը, կատաղութիւնը, արբածների բարձրածայն, կոպիտ հոհուոցը խոցելով սիրտս խեղդում էին ինձ... Խլելով ինձնից զութակս, այդ մարդը, կարծես, խլեց իւր հոգիս, կեանքս... 30 երկար, թշւառ տարիներ դա իւր միակ լնկերս էր... ախ, իմ զութակը... ես սիրում էի նրան, աւելի, ես պաշտում էի նրան... հաւատացէք, պարոն, Մառիեթթայիս և զութակս ես սիրում էի հաւասար, միևնոյն սիրով...

Մերունին տարաւ իւր դողդոջուն ձեռը աչքերին, սրբեց արտասուքի կաթիլները և շարունակեց.

— Իմ զութակը հազւազիւտ էր... ամբողջ ֆլորենցիան գիտէր նրան... մի որ իշխան Ֆուանչեսքո դ'Աքուսու կինը, Ֆլորենցիայի առաջին գեղեցկունին, իւր կրծքի վարդը տւեց ինձ իրբեւ պարզելաւ ածելուս համար... հասարակութիւնը բուռն ծափահարութիւններով ընդունեց ինձ... այս, իմ զութակը դիւթիչ էր, նրա մեղեղին թափանցում էր մարդու սրտի ամենախորը և չարազործի աչքերից անգամ քամում էր արտասուքի կաթիլներ... զութակս գիտէր լաւ, ողբալ... ամբոխի ատաջ, ամբոխի աչքում դա մի փայտեայ կտոր էր, իսկ երբ ես առանձնանում էի այգեստանում, կամ անտառում իմ զութակը սկսում էր ուրախ երգել, փոքրիկ թռչնակների հետ միասին և նրա քաղցրահնչիւն մեղեդին, նրա դայլայլիկը տարածւում էին անտառի խորհրդաւոր լուսւթեան մէջ... սոխակը անգամ լուսում էր և զմալլած լսում էր զութակիս երգը... կամ երբ նստած ծովի ափին ես ձեռս էի առնում զութակս, նա սկսում էր լաւ ողբալ կարծես, ողբում լինէր իմ՝ անցեալը, իմ թշւառ ներկան, իմ կուրութիւնը... այդ բոպէներին ես մռանում էի որ կոյլը եմ, ես սկսում էի զգալ ինձ երջանիկ, բաղտաւոր... այս... զութակս մի ամբողջ աշխարհ էր, աշխարհ սիրով, լացի, հաւաների և ուրախութեան... և ահա.. զութակս չկայ...

— Գողացմն, հարցրի ես վրդովւած ծերունու խօսքերից:

— Ոչ... այն արբածները կուրեցին, փշրեցին զութակս...

Եւ ծերուկը երեխայի նման սկսեց հեկեկալ:

Մառիեթթան աւելի ևս պինդ փաթաթւեց պապի ոտներով  
և սկսեց շոյել նրա ձեռները:

—Այս... Փշրեցին, կոտրեցին... անգութ մարդիկ... ոչ... մար-  
դիկ չեն դոքա... այլ զազաններ... ինչու ախր... թող խէջին ինձ-  
նից թշւառ կեանքս... էլ ինչու է նա ինձ...

Ներուկը ծոցից հանեց մի բան և դրեց սեղանի վերայ. դա  
ջութակի կոռորտանքներն էին:

—Ահա, պարոն, իմ խնդիրքը:

—Դուք փող էք կամենում... Զեր ջութակի գինը, հարցրեցի  
ևս մի փոքր լուսթիւնից յետոյ. Տերունին իսկոյն չը պատասխա-  
նեց. նա երկար նացեց ինձ իւր անշարժ, մեռած աչքերով, տիրօ-  
րէն ժպտաց և մի սաստիկ դառն ձայնով պատասխանեց.

—Ջութակիս գինը... ոհ ոչ, պարոն... իմ ջութակը անդին  
էր... միթէ փողով կարելի է գնել նրա սիրտ հալ ու մաշ անող  
երգերը, նրա արտասաւլից ողբերը, նրա կսկիծը, լացը... ոհ... ոչ.  
ևս կամենում եմ միայն, որ օրէնքը պատժէ չարագործին... կա-  
րելի է...

Ես թարգմանեցի դասաւորին ծերուկի խօսքերը, խնդիրը.  
բոլորիս այդ արկածը ճգեց մի տիսուր տրամադրութեան մէջ:

—Այս... ես պատիժ եմ խնդրում, կրկնեց ծերուկը:

Ես իմացայ մի քանի օրից յանցաւորների անունները, մի  
խնդիրք դրեցի և մի շաբաթից դործը քննեց հաշտարար դատա-  
ւորի մօտ. ծերուկի շահերի պաշտպանութիւնը զատաստանում  
յանձն առայ նոյնպէս ես:

Դատարանի դահլիճը լցւած էր քաղաքիս ընտիր հասարակու-  
թիւնով. կանայք նստացրել էին իրանց մօտ փոքրիկ Մառիեթ-  
թային և տալիս էին նրան քաղցրեղէն, փող:

Ծերուկ իտալացի-երաժիշտը կանգնած էր մօտս:

Երբ ես վերջացրի իմ ճառը, սենեակում լսւեցան խուլ հե-  
կեկանքներ. ծերուկը լալիս էր:

—Իմ ջութակս... իմ անդին ջութակս, անդադար կրկնում  
որ նա:

Դատաւորի վճիռը խիսու էր. յանցաւորը վճարեց ծերուկի  
օգախն 100 բուրլի. իտալացի-երաժիշտը մեքենայարար լսեց վճիռը,

որ ես թարգմանեցի նրան, մեքենայաբար առաւ փողերը և դանդաղ, շփելով պատերը առաջ տարածած ձեռներով հեռացաւ ինձ՝ նից։ Մառիեթթան զիմաւորեց նրան և երկուսը կրկին մօտեցան ինձ։ — Ենորհակալ եմ պարոն... այս փողը կապահովացնէ Մառիեթթայիս... գլուխ տուր պարոնին, դարձաւ նա երեխալին։

— Եւ Զեզ, ասացի ես։

— Ի՞նձ... մէ... ինձ ոչինչ հարկաւոր չէ... տեսնում էք այս կտորտանքները, ջութակիս փշրանքները... սոքա մնացին միայն ինձ... էլ ուրիշ ջութակ չի կարող փոխարինել սրանց... ո՞հ... իմ ջութակս...

Եւ ծերուկը ճիշտ մայրական գգւանքով սեղմեց որտին ջութակի կտորտանքները և երերմելով դուրս եկաւ փողոց։

Այդ օրից ի վեր ես էլ չը տեսակ ծերուկ երաժշտին։